ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՆՈՐ ԵՐԶՆԿԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Երզնկա համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Երզնկա, 0232-3-67-91 norerznka-village@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019 թվականի N 158

ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Նոր Երզնկա համայնքի բնակիչներ Վիկտորյա և Սերյոժա Պետրոսյանների դիմումը, որով ցանկություն են հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով իրենց պատկանող Նոր Երզնկա համայնքի 2-րդ փողոցի 23/1 հասցեում ինքնակամ կառուցված տնտեսական շինությունները:
Կատարված ուսումնասիրությունից պարզվել է, որ Վիկտորյա և Սերյոժա Պետրոսյաններին սեփականության իրավունքով պատկանող Նոր Երզնկա համայնքի 2-րդ փողոցի 23/1 հասցեում 1988 թվականին իրականացրել են շինարարական աշխատանքներ և ինքնակամ կառուցել են 37,8 ք.մ մառան, 68,3 ք.մ. թոնրատուն, 32,9 ք.մ. ծածկոց և 2,0 ք.մ. թոչնաբուն:
Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի 22.1-րդ մասի պահանջներով և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Վիկտորյա և Սերյոժա Պետրոսյսններին սեփականության իրավունքով պատկանող Նոր Երզնկա համայնքի 2-րդ փողոցի 23/1 հասցեում 37,8 ք.մ մառանը,68,3 ք.մ թոնրատունը, 32,9 ք.մ ծածկոցը և 2,0 ք.մ թոչնաբունը կառուցվել է 2001թվականի մայիսի 15-ից առաջ, ինքնակամ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք *որոշում եմ*.

1.Վիկտորյա և Սերյոժա Պետրոսյաններին սեփականության իրավունքով պատկանող Նոր Երզնկա համայնքի 2-րդ փողոցի 23/1 հասցեում 37,8 ք.մ մառանը, 68,3 ք.մ թոնրատունը, 32,9 ք.մ ծածկոցը և 2,0 քմ. թոչնաբունը համարել օրինական:
1) Իրենց միջոցների հաշվին պետք է վճարեն կառույցի իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:
2. Որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Լևոն Խուրշուդյանի վրա:
3.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղարԳրիգոր Մարդոյանը:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱԼԻՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

20 ___ թ. _____ ____
գ.Նոր Երզնկա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՆՈՐ ԵՐԶՆԿԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Երզնկա համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Երզնկա, 0232-3-67-91 norerznka-village@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 159

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԸ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 17-ի N1066-Ն որոշմամբ սահմանված կարգի 7-րդ կետը, ինչպես նաև Հրանուշ Պողոսյանի, Օֆելյա, Սարգիս և Նարեկ Անտոնյանների գրավոր դիմումը իրենց սեփականությունը հանդիսացող գյուղատնտեսական նշանակության ցածրարժեք հողատեսքն ավելի բարձրարժեք հողատեսքի փոխադրելու մասին՝ *որոշում եմ.*

1.Բավարարել Հրանուշ Պողոսյանի, Օֆելյա, Սարգիս և Նարեկ Անտոնյանների դիմումը իրենց սեփականությունը հանդիսացող Նոր Երզնկա համայնքի 07-050-0121-0001,07-050-0121-0066 և 07-050-0121-0067 կադաստրային ծածկագրերի տակ գտնվող 0.54104 հա 5-րդ կարգի արոտավայրը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի 5-րդ կարգի ջրովի վարելահողի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱԼԻՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

20 __ թ. _____ ____
գ.Նոր Երզնկա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՆՈՐ ԵՐԶՆԿԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Երզնկա համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Երզնկա, 0232-3-67-91 norerznka-village@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 160

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 17-րդ հոդվածով՝ *որոշում եմ.*

2019 թվականի դեկտեմբերի 17-ին ժամը 11.00-ին հրավիրել համայնքի ավագանու արտահերթ նիստ հետևյալ օրակարգով.

1. Նոր Երզնկա համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 7-ի N56-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին
2.Նոր Երզնկա համայնքի ղեկավարի կողմից գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները հաստատելու մասին
3. Նոր Երզնկա համայնքի ղեկավարի 2020 թվականի վարձատրության չափը սահմանելու մասին
4.Նոր Երզնկայի համայնքապետարանի աշխատակազմի 2020 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին
5.<<Նոր Երզնկայի մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության 2020 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին
6.<<Նոր Երզնկայի մշակույթի տուն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության 2020 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին
7.Նոր Երզնկա համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերից 2020թվականի ընթացքում աճուրդային կարգով օտարման առաջարկվող հողամասերի ցուցակը հաստատելու մասին
8.Նոր Երզնկա համայնքի 2020 թվականի տարեկան աշխատանքային պլանին (ՏԱՊ) հավանություն տալու մասին
9. Համայնքային սեփականություն հանդիսացող գույքը վարձակալության իրավունքով տրամադրելու վերաբերյալ համաձայնություն տալու և վարձավճարի չափ սահմանելու մասին
10.Նոր Երզնկա համայնքի <<Նոր Երզնկայի մշակույթի տուն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը անհատույց և անժամկետ օգտագործման իրավունքով գույք ամրացնելու մասին:
11.Նոր Երզնկա համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱԼԻՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

20 __ թ. _____
գ.Նոր Երզնկա